



Web: [www.aarhus.am](http://www.aarhus.am) , mob: 077 76 46 41

E-mail: [blejanli@gmail.com](mailto:blejanli@gmail.com)

N AA-002

30 հուլիսի 2015թ.

ՀՀ Բնապահպանության նախարար  
պարոն Արամայիս Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան,

Հայաստանի Օրիուս կենտրոնների համակարգողները ողջունում են «ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ օրենքի նախագիծը կրկին շրջանառության մեջ դնելու փաստը: Մենք դեռ 2013 թվականին քննարկել ենք այն, միաձայն դրական գնահատել, որի մասին գրել ենք ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին, ապա, 2014թ.-ին՝ նաև նորանշանակ վարչապետ Հովիկ Աբրահամյանին:

Մենք կրկին ողջունում ենք այս գործընթացը: Կարևորում ենք ոչ միայն բնավճարներից համայնքներին տրամադրվող ֆինանսական հատկացումների ավելացման առաջարկը, այլև, որ ներկայացված օրենքի նախագծով առաջարկվում է հատկացում կատարել նաև բնօգտագործման վճարներից: Միաժամանակ հավատարիմ ենք մնում մեր նախկինում արտահայտած այն պնդմանը, որ բնօգտագործման վճարներից մասհանումները պետք է ստանան բոլոր համայնքները, քանի որ Հայաստանի Հանրապետության բնական ռեսուրսները, այդ թվում ընդերքը ազգային հարստություն է և նրա ժողովրդի սեփականությունն է: Այդ փաստն ամրագրված է ՀՀ անկախության հռչակագրի 7-րդ հոդվածով և միանգամայն իրավական է, քանի որ ընդունված է ամբողջ ժողովրդի կողմից:

Ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ դեռ 2013 թ. նոյեմբերի 7-ին, Երևանի Օրիուս կենտրոնում Հայաստանի օրիուս կենտրոնների աշխատանքային հանդիպման ժամանակ, որին մասնակցել են նաև մի շարք ՀԿ-ների ներկայացուցիչներ, ընդունվել է որոշում, այն է (մեջբերում ենք).




- 1. Հավանություն տալ ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությանը՝ ավելացնելու համայնքներին հատկացվող բնապահպանական սուբվենցիաները,**
- 2. Օրենքի նախագիծն ընդունել, սակայն ուղղումով՝ վերը նշված 1%-ի փոխարեն ընդունել նախորդ՝ 5%-ի տարբերակը:**

3. Այս լուծումը համարել ժամանակավոր՝ նպատակ ունենալով 100% -ին հասնել և, որ հասկացումներ կատարվեն բոլոր համայնքներին, քանզի բնական ռեսուրսները (ընդերք, մակերեսային ու ստորերկրյա ջրային ռեսուրսները, անտառ և այլն) բոլորինն են, այլ ոչ միայն ընտրված համայնքներինը,
4. Ընդունել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի առաջարկը՝ քննարկելու ու վերլուծելու համայնքների կողմից ստացվող նպատակային գումարների օգտագործման սկզբունքը, կարգն ու արդյունավետությունը՝ այն կատարելագործելու նպատակով,
5. Լայն քննարկման առարկա դարձնել այս խնդիրը Հայաստանի (ՀՀ և ԼՂՀ) համայնքներում՝ կազմակերպելով իրազեկման ու մասնակցության գործընթաց:

Խնդրում ենք Ձեզ, հնարավորինս տեղյակ պահել մեզ գործընթացի զարգացումների մասին՝ հնարավորություն ընձեռելով պատշաճ իրազեկում ու մասնակցություն ապահովելու հանրության շրջանում թե՛ էլեկտրոնային տարբերակով պարբերական իրազեկման միջոցով, թե՛ համայնքային մակարդակում պլանավորվող նպատակային հանդիպումների միջոցով:

Հարգանքով՝ Հայաստանի Օրիուս կենտրոններ

Ալավերդու Օրիուս կենտրոն Անուշ Էվոյան	
Ապարանի Օրիուս կենտրոն Նատալյա Մանուկյան	
Գավառի Օրիուս կենտրոն Լիաննա Ասոյան Մարինե Մազմանյան	 
Գյումրու Օրիուս կենտրոն Գևորգ Պետրոսյան	
Դիլիջանի Օրիուս կենտրոն Ալբերդ Հարոյան	
Եղվարդի Օրիուս կենտրոն Ռուզաննա Մանյան, Անուշ Բեյբության	 
Օրիուս կենտրոնների տեղեկատվության պատասխանատու Մարի Զարբյան	

Կասպանի Օրհուս կենտրոն Աշոտ Ավագյան	
Հրազդանի Օրհուս կենտրոն Անահիտ Մնացականյան Ժորա Առաքելյան	
Ստեփանավանի Օրհուս կենտրոն Մանյա Մելիքանյան	
Վանաձորի Օրհուս կենտրոն Պերճ Բոջուկյան	